



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում  
Քաղաքացիական գործ թիվ 1230/02/10թ.  
Նախագահող դատավոր՝ Ն. Գրիգորյան  
Դատավորներ՝            Հ. Խաչատրյան  
                                      Հ. Աբրահամյան

Քաղաքացիական գործ N 1230/02/10թ.

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան) վճռաբեկության կարգով.

Նախագահությամբ՝ դատավոր   Գ.Գրիգորյանի  
                                  Դատավորներ՝   Զ. Օհանյանի  
  Շ. Օհանյանի

2011թ. մարտի 24-ին

ք. Ստեփանակերտ

Դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Վաչիկ Սանջանի Բաբաջանյանի ընդդեմ «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության՝ կարգապահական տույժի ենթարկելու մասին 2009թ. ապրիլի 28-ի, թիվ 22-Վ և ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 121-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության Մարտունու ԱՇՏ պետի տեղակալի պաշտոնից ազատելու մասին «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թիվ 27-Վ հրամաններն անվավեր ճանաչելու պահանջի մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2011թ. հունվարի 20-ի որոշման դեմ հայցվոր Վաչիկ Բաբաջանյանի վճռաբեկ բողոքը,

### Պ Ա Ր Չ Ե Ց

#### **Գործի դատավարական նախապատմությունը**

Վաչիկ Բաբաջանյանը 2010թ. սեպտեմբերի 14-ին դիմել է ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան (այսուհետ՝ Առաջին աստիճանի դատարան) ընդդեմ «Արցախգազ» փակ բաժնետիրական ընկերության՝ (այսուհետ՝ Ընկերություն)

կարգապահական տույժի ենթարկելու մասին 2009թ. ապրիլի 28-ի, թիվ 22-Վ և ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 121-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով Ընկերության Մարտունու արտադրական շահագործման տեղամասի (այսուհետ՝ ԱՇՏ) պետի տեղակալի պաշտոնից իրեն ազատելու մասին Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թիվ 27-Վ հրամաններն անվավեր ճանաչելու պահանջներով:

Առաջին ատյանի դատարանի 2010թ. նոյեմբերի 16-ի վճռով հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի 2010թ. հունվարի 20-ի որոշմամբ Վ. Բաբաջանյանի վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Առաջին ատյանի դատարանի 2010թ. նոյեմբերի 16-ի վճիռը մասնակիորեն բեկանվել է և Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թիվ 27-Վ հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասով գործի վարույթը՝ կարճվել:

Նշված որոշման դեմ հայցվոր Վ.Բաբաջանյանը բերել է վճռաբեկ բողոք:

Ընկերությունը բերել է վճռաբեկ բողոքի պատասխան:

### **Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի և հիմնավորումների սահմաններում.

Վերաքննիչ դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ: Մասնավորապես՝ խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջները, սխալ է մեկնաբանել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը: Դատարանը չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, այլ կիրառեր նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները:

Բողոք բերած անձը նշված պնդումները պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել աշխատանքային օրենսգրքի 215-րդ հոդվածի 1-ին մասը, չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջները և կարճեր քաղաքացիական գործի վարույթը, այլ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի կիրառմամբ պետք է բեկաներ դատական ակտը ու կայացներ հայցապահանջը բավարարելու մասին նոր դատական ակտ, քանի որ Առաջին ատյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ և դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատարանը խախտել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածի պահանջները, ըստ որի՝ մինչ կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Գործատուն կարգապահական տույժը կիրառել է դրա համար օրենքով սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ: Խախտումը հայտնաբերվել է 2009թ. դեկտեմբերին, իսկ այդ հիմքով իրեն աշխատանքից ազատել է 2010թ. հունիսին:

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը, որն ազդել է գործի ելքի վրա:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանում է նրանով, որ օրենսդիրը ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասով հրամանը դատական կարգով բողոքարկելու համար մեկամսյա ժամկետ է սահմանում, հրամանը ստանալու օրվանից, այլ ոչ թե դրա մասին տեղյակ լինելու օրվանից: Աշխատանքից ազատելու վերաբերյալ հրամանի վավերացված պատճենն առաջին անգամ ստացել է կադրերի բաժնի պետից՝ 10.06.2010թ.

գրառումով, սակայն ստորագրելուց՝ հրամանի բնօրինակում լրացուցիչ գրառել է դրա փաստացի՝ 2010թ. սեպտեմբերի 10-ին ստանալու մասին:

Բողոք բերած անձը պատճառաբանում է, որ աշխատանքից ազատվել է ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և նույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասով՝ իր աշխատանքային պարտականությունները ոչ պատշաճ կատարելու համար: Մինչդեռ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի նշված հիմքով գործատուն իրավունք ունի լուծելու աշխատանքային պայմանագիրը, եթե աշխատողը վերջին մեկ տարվա ընթացքում առնվազն երկու անգամ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տված դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումներն իր համար առաջացրել են ծանր հետևանքներ, ինչի հետևանքով զրկվել է նախկին աշխատանքում աշխատելու հնարավորությունից, իսկ աշխատանքից իրեն ազատելու մասին հրամանի հիմքը սահմանափակել է այլ հիմնարկներում աշխատելու իր հնարավորությունը:

Բողոք բերած անձը գտնում է, որ Գերագույն դատարանի որոշումը էական նշանակություն կարող է ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար:

Բողոք բերած անձը խնդրում է բեկանել վերաքննիչ դատարանի 2011թ. հունվարի 20-ի որոշումը և հայցապահանջը բավարարել՝ կայացնելով նոր դատական ակտ:

#### **Վճռաբեկ բողոքի պատասխանի դիրքորոշումը.**

Ըստ Ընկերության գործադիր տնօրենի կողմից վճռաբեկ բողոքի ներկայացված պատասխանի, վճռաբեկ բողոքում նշված փաստերը, չեն համապատասխանում իրականությանը, ուստի խնդրում է վճռաբեկ բողոքը մերժել, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը թողնել անփոփոխ:

#### **Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Համաձայն Ընկերության հետ կնքված 2008թ. մարտի 1-ի պայմանագրի, Վաչիկ Սանջանի Բաբաջանյանն աշխատանքի է անցել Ընկերության Մարտունու ԱՇՏ-ում՝ որպես իրացման գծով պետի տեղակալ:

2. Ընկերության գործադիր տնօրենի 2009թ. ապրիլի 28-ի, թ. 22-Վ հրամանով Բաբաջանյանը ենթարկվել է կարգապահական տույժի՝ խիստ նկատողության: Վ.Բաբաջանյանը նշված հրամանը չի բողոքարկել:

3. Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թ. 27-Վ հրամանով, Բաբաջանյանը 2010թ. հունիսի 10-ից ազատվել է զբաղեցված պաշտոնից և ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն օրենսգրքի 121-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով լուծվել նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

4. Հայցվորի Վերաքննիչ դատարանում տված բացատրությամբ, 2010թ. հունիսի 4-ից հետո ինքն աշխատանքի չի գնացել, քանի որ իրեն նախազգուշացրել էին աշխատանքից ազատված լինելու մասին, իսկ նույն օրը Ընկերության Մարտունու ԱՇՏ-ի աշխատանքից Սևիկյանի կողմից իրեն տրամադրված՝ Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի հրամանը ստորագրված և կնքված չի եղել:

5. Վերաքննիչ դատարանի դատական քննության ժամանակ Հայցվորի կողմից ներկայացված՝ Ընկերության Մարտունու ԱՇՏ-ի աշխատակից Ս.Սևիկյանի կողմից 2010թ. հունիսի 4-ին իրեն տրամադրված Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թիվ

27-Վ հրամանի վրա առկա «Պատճենը ճիշտ է» տպագիր գրառումով դրոշմակնիքում կատարված է «03.06.2010թ.» ձեռագիր գրառումը:

6. Ընկերության կադրերի բաժնի պետ Ա.Ղայամյանի կողմից՝ Ընկերության գործադիր տնօրենի անունով կազմված զեկուցագրի համաձայն, Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թիվ 27-Վ հրամանի պատճենը 2010թ. հունիսի 10-ին ինքը տրամադրել է հայցվոր Վ.Բաբաջանյանին, ով ստանալուց հետո այն չի ստորագրել: Իսկ Ընկերության Մարտունու ԱՇՏ պետ Ս.Սևիկյանի կողմից՝ Ընկերության գործադիր տնօրենի անունով կազմված զեկուցագրի համաձայն՝ Մարտունու ԱՇՏ-ի նախկին պետ Ա.Հայրապետյանի կողմից իրեն փոխանցված Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թիվ 27-Վ հրամանը 2010թ. հունիսի 4-ին ինքը հանձնել է Վ.Բաբաջանյանին:

7. Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թ. 27-Վ հրամանի վավերացված լուսապատճենի համաձայն, նշված հրամանի պատճենը Բաբաջանյանը ստացել է 2010թ. հունիսի 10-ին:

### **Գերագույն դատարանի պատճառաբանություններն ու եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ բողոքը հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ.

Գործի փաստերի համաձայն, Վաչիկ Բաբաջանյանն աշխատանքից ազատվել է Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թ. 27-Վ հրամանով:

Պարզված է, որ բողոք բերող անձը նշված հրամանը ստացել է 2010թ. հունիսի 4-ին, իսկ իր իրավունքների պաշտպանության հայցով դատարան դիմել է 2010թ. սեպտեմբերի 14-ին, այսինքն աշխատանքից իրեն ազատելու մասին հրամանը ստանալուց երեք ամիս հետո՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դատարան դիմելու մեկամսյա ժամկետի խախտմամբ:

Բողոք բերած անձի հաստատմամբ, 2010թ. հունիսի 4-ից ինքը չի ներկայացել աշխատանքի, քանի որ նախագուշացվել էր աշխատանքից ազատված լինելու մասին. դատարան չի դիմել, այլ այդ ընթացքում դիմում-բողոքներ է ներկայացրել այլ մարմինների:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածով սահմանված՝ աշխատանքային վեճերով դատարան դիմելու մեկամսյա ժամկետը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածի իմաստով հայցային վաղեմության ժամկետ չի կարող համարվել, քանի որ այն ըստ էության, սահմանում է դատարան դիմելու իրավունքի իրականացման ժամկետ: Իսկ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 332-րդ հոդվածով սահմանված հայցային վաղեմության ժամկետն ընդամենն այնպիսի ժամկետ է, որի ընթացքում հայցվորը կարող է ակնկալել իր իրավունքների դատական պաշտպանություն: Այդ ժամկետը չի սահմանափակում դատարան դիմելու հայցվորի իրավունքը: ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված հայցային վաղեմությունը կարող է կիրառվել միայն պատասխանողի համապատասխան միջնորդության հիման վրա, մինչդեռ աշխատանքային վեճերով դատարան դիմելու՝ աշխատանքային օրենսգրքով սահմանված մեկամսյա ժամկետը գործում է ուղղակիորեն, անկախ պատասխանողի կողմից միջնորդություն ներկայացված լինելու հանգամանքից, և այդ ժամկետի բացթողումը, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի ուժով, գործի վարույթը կարճելու անվերապահ հիմք է հանդիսանում:

Նշված հիմնավորումներով և պատճառաբանություններով, Վերաքննիչ դատարանը ճիշտ հետևության է հանգել ու ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 99-րդ հոդվածի 1-ին կետի ուժով Ընկերության գործադիր տնօրենի 2010թ. հունիսի 3-ի, թ. 22-Վ հրամանն անվավեր ճանաչելու մասով գործի վարույթը կարճել, ուստի Գերագույն

դատարանը հիմնավոր չի համարում բողոք բերած անձի այն պատճառաբանությունը, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասը:

Գերագույն դատարանը գտնում է, որ գործի վարույթը կարճելու հիմքն ի հայտ է եկել առաջին ատյանի դատարանում գործի քննության ընթացքում: Նման հանգամանքներում Վերաքննիչ դատարանը ճիշտ է ղեկավարվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ու քաղաքացիական գործի վարույթը կարճել, հետևաբար, Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում վճռաբեկ բողոքի այն պատճառաբանությունը, որ Վերաքննիչ դատարանը չպետք է կիրառեր ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը, այլ պետք է կիրառեր նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի պահանջները:

Կարգապահական տույժի ենթարկելու մասին Ընկերության գործադիր տնօրենի 2009թ. ապրիլի 28-ի, թ. 22-Վ հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասով Առաջին ատյանի դատարանի վճռին Վերաքննիչ դատարանը իրավացիորեն չի անդրադարձել՝ հայցվոր Բաբաջանյանի կողմից այն չբողոքարկելու պատճառաբանությամբ ու Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի այդ հիմքին ևս չի անդրադառնում ու քննարկման առարկա չի դարձնում:

Ինչ վերաբերում է բողոք բերած անձի այն պատճառաբանությանը, որ Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասը և 215-րդ հոդվածի 1-ին մասը, ապա Գերագույն դատարանը արձանագրում է, որ 165-րդ հոդվածը վերաբերում է ամենամյա արձակուրդի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժին ու առնչություն չունի քննվող քաղաքացիական գործի հետ, իսկ 215-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի որոշման մեջ որևէ մեկնաբանություն չի տրված, հետևապես վճռաբեկ բողոքի այդ հիմքերը ևս անհիմն են:

Վերաքննիչ դատարանը կայացրել է ըստ էության հիմնավոր ու պատճառաբանված որոշում: Այսպիսով, Գերագույն դատարանը վճռաբեկ բողոքի հիմքերը բավարար չի համարում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Ելնելով վերը շարադրվածներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-255-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Վաչիկ Բաբաջանյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. հունվարի 20-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ՝**

**Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ**

**ԴՏԱՎՈՐՆԵՐ՝**

**Զ. ՕՉԱՆՅԱՆ  
Շ. ՕՉԱՆՅԱՆ**